

Հարգելի ներկաներ ՀՀ Մշակույթի նախարարությունը և Արագածոտնի մարզպետարանը առաջին աշխարհամարտի 100 ամյակին ընդամաք մի շարք միջոցառումներ է իրականացնելու:

Միջոցառումներից առաջինը <<Կանթեղ>> թերթում տպագրվող հոդվածաշարն է, որի առաջին հոդվածը տպագրվել է հենց օգոստոսի 1-ին: <<Այսքան արյուն թե մեզ ներեն մեր որդիք, թող ողջ աշխարհն հային կարդա նախատինք>>, այս խորագիրն է կրում մեր միջոցառումների շարքը:

Այսօր Ուլջան համայնքում հանդիպում է Անդրանիկի 9 զինվորների սերունդների հետ, ովքեր կպատմեն հուշեր իրենց հայրերից ու պապերից: Անդրանիկի զինվորներն են՝

1. Թուփոյան Ղազար
2. Փիլոյան Մնացական
3. Պետրոսյան Սահակ
4. Պետրոսյան Հովհաննես
5. Պետրոսյան Հարություն
6. Ղազարյան Մուրադ
7. Մարտիրոսյան Սիմոն
8. Ադոյան Բաբկեն
9. Պողոսյան Ասատուր

Հարգանք Ձեզ...

Դուք էիք, որ ազատության տատասկոտ ճանապարհին՝ ցավոտ ու բոսոր մշուշի մեջ, մեր ամենից գեղեցիկ, ամենից խիզախ երազանքները հյուսեցիք:

Դուք էիք, որ բռնության ու արհավիրքի խեղդող խավարի մեջ՝ Ձեր բոցավառ աչքերի փայլով մոլորված ու լքված հոգիների ուղիները լուսավորեցիք: Եկաք ու հաստատվեցիք Ուլջան գյուղում, սերունդներ տվեցիք:

Ձեր սերունդները որպես երախտիք 1967թ. Հայաստանում, առաջինը Ուլջան գյուղում կանգնեցրեցին Չորավար Անդրանիկ Օզանյանի՝ Սարերի Ասլանի հուշարձանը:

Դասեր քաղենք Հայոց պատմությունից և գիտելիքներով զինված՝ գաղափարապես հասուն մեր խոսքն ասենք հայոց ցեղասպանության 100 ամյակի առիթով: